ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 135 - 2026
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «06» 03 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նպաստ տրամադրող), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա), մի կողմից և Սերգեյ Դայանը (այսուհետ՝ Նպաստ ստացող) (անձնագիր՝ AO 0202651, տրված՝ 30.04.2025թ.-ին, 007-ի կողմից) մյուս կողմից, հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 171-Ա/2 հրամանով հաստատված դրույթները, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ հաստատված «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով նախատեսվում է նպաստ տրամադրել 2026 թվականի փետրվարի 7-ից 15-ը Ռուսաստանի Դաշնության Օմսկ քաղաքում կայացած Վրանց Յակոբ Շպետի անվան լարային-աղեղնավոր գործիքների կատարողների III միջտարածաշրջանային բաց մրցույթին Սերգեյ Դայանի որդու՝ Էդուարդ Դայանի մասնակցության նպատակով 2026 թվականի փետրվարի 5-ից 16-ը Երևան-Օմսկ/Օմսկ-Երևան ավիատոմսի համար՝ 200810 (երկու հարյուր հազար ութ հարյուր տասը) ՀՀ դրամի (այսուհետ՝ Նպաստի գումար) չափով:

2. ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Նպաստի գումարը տրամադրվում է Նպաստ ստացողին՝ Պայմանագրով նշված բանկային հաշվին՝ դրամական միջոցների փոխանցման միջոցով: Նպաստի գումարի փոխանցումը կատարվում է պայմանագրի կնքման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Նպաստ տրամադրողն իրավունք ունի՝**

3.1.1.Նպաստ ստացողից պահանջել հատուցելու Նպաստի գումարն ընդունելուց հետո հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը:

3.1.2.Նպաստ ստացողի կողմից ներկայացված հաշվետվության հետ կցվող անհրաժեշտ փաստաթղթերի իսկությունը չհամապատասխանելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

3.2. **Նպաստ տրամադրողը պարտավոր է՝**

3.2.1.Պայմանագրի 2.1 կետով սահմանված կարգով Նպաստ ստացողին փոխանցել Պայմանագրի 1.1 կետով սահմանված Նպաստի գումարը:

3.3. **Նպաստ ստացողն իրավունք ունի՝**

3.3.1. Մինչև Նպաստի գումարն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այս դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

3.4. **Նպաստ ստացողը պարտավոր է՝**

3.4.1. Ընդունել Նպաստի գումարը:

3.4.2. Հատուցելու Նպաստի գումարը փոխանցելուց հետո, դրա ընդունելուց հրաժարվելու հետևանքով Նպաստ տրամադրողին պատճառված իրական վնասը:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Նպաստ ստացողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության համար:

4.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.3. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.5. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐՈՂ	ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Սերգեյ Էդուարդի Դայան
Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	Ք.Երևան, Ա.Տիգրանյան փ., 5/3շ., բն. 7,
ՀՀ ՖՆ գործառական վարչություն	Անձնագիր՝ AO 0202651, տրված՝ 30.04.2025թ.-ին, 007-ի կողմից
Հ/Հ 900011032878	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 16600579703900
Գլխավոր քարտուղար՝	էլ. փոստ՝ sergey.dayan78@gmail.com
	Հեռ.՝ 055 85-80-01
_____ Հ. Հակոբյան	_____ Ս. Դայան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն)